

Ուրիշ ժամանակակից պատմիչի մը խօսքերն են .

«Այս մեծափառ աստուածաշնչոյ միւս զօրավար և երեւիլի նախամարտիկ Հայաստանեայց զաւակ . անոր պարծանքն ու զարդը ամենօրնեակ Քուրդը երեւալով , անոր ձիւրու ոտնաձայնը , նիզակներու ճօճիւնը , սուրերու փայլատակումն , աղեղներու ճայթիւնները ու կուռ զրահները , ասպարաւի լինելն ու անոր ուրիշ ահարկու ասպազէնը կը զարհուրեցնեն թշնամիները : Բաց ի շատ պատերազմների մէջ ունեցած քաջութիւնն ու յաղթութիւնն , որ ետ է մղեր թշնամին իր ձեռքով , անոր քաջութիւնն ու յաղթութիւնը եղեր է առիւծի ու քաջ արծու քաջութիւնն ու յաղթութիւնը նապաստակների վրայ՝ բոլոր պատերազմներու մէջ : Այսպէս էր Ղազանի և Ղարսպանտի և Պուսախի օտարացեղ թագաւորներու ու անոնց մեծամեծ սպարապետներու առաջ :»

Վաչուտ . (հազար երկու հարիւր երեսուն հինգ թուականէն մինչ՝ վաթսուն եօթ .)

Քուրդ Բ. մեծ . կին խորիշահ Մամիկոնեան .

Դաւիթ Վաչէ վաղամեռ . Տալիւ ծառան . 1283 = կին Սերուս խաթուն դուստր Ուրանայ .

1317 . Քուրդ Գ. Անբերդցի = կին խոյան կամ խռան խաթուն .

Թէոդորոս Արքին .

Թալիկ .

Արձանագրական ասպայոյցներն են .

«Գ. Քուրդի որդի Թէոդոս կամ Թէոդորոս Արքին վկայէ յարձանա Յովհաննայ վանից զի յեկեղեցւոյ նորին «Եղեալ էր շիրիմ (իւր) Պարոն հայրն իմ այր Ամասունի . ինքն բազում կալուածս շնորհէ վանացն , զորս հաստատէ մայրն նորա խռանդ խաթուն իբրև դշտոյ իշխանաւոր . ցոյս վայր որ է միջոց 150 ամաց գտանեմ յազգս եօթն զյիշատակ Մարացի տոհմիս Վաչուտանց , որոյ բազմադէպ իմն է իշխանանալ կողմանցս որ գրակէ համատոհմը նորա Ամատունիք տիրէին ի նախնումն . վասն որոյ թուի յետնոյ պայազատին զհայր իւր կոչել Այր Ամատունի և կամ զի Արմատն ըստ խորենացւոյ Եկ լսի ի մարաց լեզու »